# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Սամսոն Մխիթարյան*

Հոդվածում քննարկվում է քաղաքական ինստիտուտների պատմական զարգացման, ժողովրդավարական պետության կայացման գործընթացում դրանց կարևորության և անհրաժեշտության հարցը: Դիտարկվում են քաղաքական ինստիտուտների դերը, դրանց փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետության պայմաններում: Վերլուծվել և համեմատվել է վերջին 15 տարիների ընթացքում քաղաքական ինստիտուտների գործունեությունը՝ պայմանավորված կուսակցությունների՝ քաղաքական ինստիտուտներում ներգրավվածության աստիճանով:

Վերջին մեկուկես տասնամյակում աշխարհում տեղի ունեցող փոփոխություններն ընթանում էին այնպիսի արագությամբ, որ նախկինում դրա համար կպահանջվեին տասնամյակներ կամ գուցե հարյուրամյակներ, ինչը պայմանավորված էր աշխարհի գերիզոր պետություններից մեկի՝ Խորհրդային Միության փլուզմամբ:

Արևելյան Եվրոպայի երկրները՝ մինչև ԽՍՀՄ փլուզումը, իսկ փլուզումից հետո՝ նաև անկախություն ձեռք բերած հետխորհրդային հանրապետությունները կանգնեցին բազմաթիվ խնդիրների առջև: Չնայած նրանք այս կամ այն չափով հենվում են արևմտյան փորձի վրա, որոշակի նյութական ու տեխնիկական օգնություն են ստանում, այնուամենայնիվ, լուրջ դժվարությունների են հանդիպում նոր ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման գործընթացում, ինչն ուղեկցվում է սոցիալական ցնցումներով, տնտեսության քայքայմամբ և գերարժեզրկման վտանգով, շատ տեղերում՝ նաև անոմիայով [1, c. 373]:

Ժողովրդավարական ինստիտուտների կազմավորումը ձևավորվում է մարդկության պատմության ամբողջ ընթացքում: Չնայած դասակարգերի սկզբնավորման ժամանակաշրջանում նկատելի էին ժողովրդավարության որոշակի սաղմեր, այնուամենայնիվ, կարելի է համարել, որ ժողովրդավարությունն սկզբնավորվում է անտիկ ժամանակաշրջանում՝ ի դեմս անտիկ հունական ու հռոմեական պետությունների:

Արդի ժողովրդավարության հիմքը կարելի է համարել անգլիական

պառլամենտարիզմի ձևավորումը: Արդեն 18-րդ դարում անգլիական օրենսդրությունում ամրագրված էր ազատության այն բարձրագույն աստիճանը, որը կազմում էր պետական շինարարության հիմքը [2, c. III]: Այն ժողովրդավարության զարգացման նոր փուլի հիմքը դրեց, որը պետական կյանքին քաղաքացիների անմիջական մասնակցության սկիզբն էր: Ընտրողների մասնակցությունը պետական կառավարմանը փոխեց նաև գործադիր և օրենսդիր իշխանությունների փոխհարաբերությունները՝ փոխադարձ վերահսկողություն սահմանելով միմյանց նկատմամբ: Իրականում պառլամենտարիզմը հստակ մեխանիզմ էր, որը կարող էր էականորեն կարգավորել, ուղղորդել և, միևնույն ժամանակ, ձևավորել արդեն արագ փոփոխվող իրական կյանքը: Պառլամենտարիզմն, անշուշտ, մարդկության քաղաքական զարգացման վերջնական աստիճանը և սահմանը չէր, այլ միայն այդ զարգացման կարևոր աստիճաններից մեկը և կարևոր փուլ ժողովրդավարության կատարելագործման ու քաղաքական զարգացման ճանապարհին: Չնայած ժամանակի դժվարություններին ու արագ փոփոխվող միջազգային կյանքին, պառլամենտարիզմն աստիճանաբար հարթեց իր տեղը և մնաց քաղաքական կյանքի ու ժողովրդավարության զարգացման հիմքերից մեկը:

Առաջին հանրապետության ժամանակ պառլամենտարիզմը մուտք գործեց նաև Հայաստան, իսկ անկախություն ձեռք բերելուց հետո այն զարթոնք ապրեց: Ստեղծվեցին նոր քաղաքական ինստիտուտներ: Նորություն էր նաև քաղաքական պայքարը, որի ընթացքը մատնանշում է ժողովրդավարության չափը հանրապետությունում:

Այսօր արդեն ՀՀ Ազգային ժողովում ներկայացված են վեց կուսակցություն և դաշինք [3, էջ 27]: Հաշվի առնելով ժողովրդավարական ինստիտուտների կայացման գործում կուսակցությունների համակարգաստեղծ դերը՝ նպատակահարմար է ավելի հանգամանորեն անդրադառնալ ՀՀ-ում կուսակցությունների ձևավորմանը: Ինչպես նշում է Գ.Քեռյանը, «կուսակցական համակարգը պետական–քաղաքական կարգի հիմնական բնորոշիչ գործոնն է» [4, էջ 252]:

Կարելի է ասել, որ Հայաստանի քաղաքական դաշտը կուսակցությունների առատության և բազմազանության պակաս չի զգում: Հայաստանի քաղաքական դաշտում բազմաթիվ կուսակցությունների առկայությունը Գ.Պողոսյանն անվանել է բազմակուսակցականության ռեժիմ [5, էջ 135]: Դրանց թիվն այսօր Հայաստանում հասնում է 75-ի: Այդ կուսակցությունների գրեթե կեսը ստեղծվեց անկախության առաջին տարիներին, իսկ հետագայում կուսակցությունների ստեղծումը թեև արտաքուստ պայմանավորված էր ընտրություններին մասնակցությամբ, սակայն, ինչպես նշում է Գ.Պողոսյանը, մասամբ բացատրվում է հայերի՝ անհատական նախաձեռնողության, անձնական պատվախնդրության և անարխիայի որոշ տարրերի

հանդեպ ունեցած հակվածությամբ [5, էջ 137]:

Կուսակցությունների թիվը, սակայն, բնավ ուղիղ համեմատական չէ նրանց որակական հատկանիշների առկայությանը:

Քաղաքական կյանքում եղանակ ստեղծող կուսակցությունները քիչ են, մնացածների մեծ մասի նույնիսկ անվանումն անծանոթ է հասարակությանը, առավել ևս, երբ այդ կուսակցությունների գոյությունը պայմանավորված է միայն նրանց գրանցումով: Այդ կուսակցությունների ծրագրերին ու կանոնադրությանը թռուցիկ ծանոթանալն իսկ բավական է տեսնելու համար, որ դրանց հիմնական նպատակներն ու գաղափարները նույնն են [5, էջ 141]:

Հասարակական գիտակցությունը, չափազանց քաղաքականացված լինելով հանդերձ, խիստ «անկուսակցականացված» է: Գ.Պողոսյանի բնորոշմամբ՝ բնակչության լռակյաց մեծամասնությունն «անկուսակցականների կուսակցության» հետևորդ է [5, էջ 146]: Նախ՝ անարդյունավետ էր միջկուսակցական մրցակցությունը, որն էլ հանգեցրել էր հիասթափության և հոգնածության: Որոշ կուսակցական գործիչների հիմնական նպատակը դարձել էր իշխանության նվաճումը, ինչը բնական է, սակայն այդ իշխանությունն օգտագործվում էր հիմնականում անձնական շահերն առաջ տանելու համար, որն էլ բերել էր կուսակցական գործիչների նկատմամբ վստահության կորստի:

Նման կուսակցությունների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը կատարվել էր ոչ միայն հասարակական գիտակցության մեջ, այլ նաև խորհրդարանականների դիրքորոշումներում:

Խորհրդարանում ձևավորվեցին նաև դաշինքներ, որոնք երկար չգոյատևեցին, քանի որ նրանց միավորել էր կոնկրետ խնդիրների լուծումը, և բնական է, որ այդ խնդիրները լուծելուց հետո դաշինքները, որպես այդպիսին, դադարեցին գոյություն ունենալ:

Կուսակցականացումն այսօր հագեցում է ապրում, և նոր կուսակցությունների ստեղծումը դադարի միտում ունի: Սա չի նշանակում, թե դրանց ստեղծումը կդադարի, ուղղակի չի կրկնվի համատարած գրանցումների տարբերակը, և մոտակա տարիներին եղած կուսակցություններին կավելանան շատ քիչ թվով նոր կուսակցություններ: Այսօր նկատվում է կուսակցությունների միավորման միտում, որն առաջիկայում կբերի կուսակցությունների կրճատման և նոր միավորումների ստեղծման: Խորհրդարանական և նախագահական ընտրությունները վկայում են, որ միավորման անհրաժեշտությունն առկա է:

Հայկական կուսակցությունները կարելի է դասել Դյուվերժեի առանձնացրած կադրային կուսակցությունների շարքին, երբ ընտրական արշավի ֆինանսավորումն իրականացվում է մի որոշակի խումբ մարդկանց կողմից [6, c. 117]: Գրանցված կուսակցություններից ու կազմակերպություններից շատերը սոցիալական բազա չունեն, անդամների թիվն աննշան է, մի մասն

էլ ուղղակի թղթի վրա գոյություն ունի: Այդպիսի կուսակցությունները քաղաքական կյանքում որևէ դեր չեն կարող կատարել: Կուսակցության համակիրների աճը կամ նվազումը էական չափով պայմանավորված է նաև ակտիվ անդամների գործունեությամբ, որոնք, սովորաբար, մեկ-երկու տասնյակից չեն անցնում: Մի դեպքում ակտիվ անդամների հեղինակությունը, քաղաքական գործունեության ճանաչողությունն է դեր խաղում, մյուս դեպքում՝ ակտիվ անդամների ոչ ակտիվ գործունեությունը [7, էջ 61]:

Անցած տասնհինգ տարիների պատմությունը վկայում է, որ հանրապետությունում բազմակուսակցությունը կայացել է, բայց կուսակցությունների ձևավորումը դեռևս լիովին ավարտված չէ: Առաջիկա տարիներին կշարունակվի Հայաստանի կուսակցական կառուցվածքի ձևավորումը տարբեր ուղղություններով՝ աջերի, ձախերի և կենտրոնախույսների:

Իշխանության գալով՝ թե՛ աջերը և թե՛ ձախերը ձգտելու են դեպի կենտրոն, քանի որ դառնում են մեծ պատասխանատվության կրող և պատասխանատու ոչ թե կուսակիցների և համակիրների, այլ ամբողջ ժողովրդի համար: Աջերի և ձախերի առկայությունը՝ որպես առողջ հակակշիռներ, խիստ անհրաժեշտ է [7, էջ 62]:

Հայաստանի առումով ժողովրդավարությունը ենթադրում է նաև իրավական պետության ստեղծում, որի հիմքն իշխանությունների տարանջատումն է օրենսդիր, գործադիր և դատական մարմինների, ինչպես նաև ազատ մամուլի առկայությունը, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ [8]:

Քաղաքական նոր գիտակցության ձևավորումը բերել է նրան, որ հնարավոր է սահմանադրական, այն է՝ քաղաքակիրթ ճանապարհով, ժողովրդավարական ինստիտուտների միջոցով լուծել ազգի առջև ծառացած խնդիրները:

Կա՞ն այդ ինստիտուտները Հայաստանում, և որքանո՞վ են դրանք ժողովրդավարորեն ձևավորվել:

Կառավարման հանրապետական ձև ունեցող շատ պետություններում գործում է Նախագահի ինստիտուտը: Նախկին Միության բոլոր հանրապետությունների համար նորություն էր նախագահի պոստ հիմնելը, որը նորություն լինելով հանդերձ՝ ուներ որոշակի հիմք այն առումով, որ փաստորեն նախկինում կենտկոմի քարտուղարները գուցե և ունեին ավելի մեծ իշխանություն: Նախագահն ունի սահմանադրական լիազորություններ՝ ներկայացնում է պետությունը միջազգային հարաբերություններում, ղեկավարում է գործադիր իշխանությունը, մասնակցում դատավորների նշանակմանը, շնորհում բարձրագույն զինվորական կոչումներ և այլն [8]: Խոսքն այստեղ այն մասին է, թե որքանով է արդարացված այդ պոստի հիմնումը: Ինչպես նշում է Վ.Փիլիպոսյանը, «որքան էլ մենք Հայաստանում ցանկանանք խորհրդարանի, այսինքն՝ օրենսդիր իշխանության ուժեղացում, դա համարյա անհավանական գործընթաց է, որովհետև ողջ աշխարհում միտումը

գործադիր իշխանության ուժեղացումն է՝ օրենսդիրի հաշվին» [9, էջ 36]:

ՀՀ-ում նախագահի պոստ հիմնվեց 1991թ. Գերագույն խորհրդի ընդունած օրենքով: Այդ օրենքի համաձայն և երկրի նախագահի ընտրությամբ հանրապետությունում հիմք դրվեց կառավարման նոր՝ կիսանախագահական կառավարման համակարգին: Մինչև 1995թ. հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը հանրաքվեի միջոցով իշխանությունների լիազորությունների սահմանումը վերապահված էր Գերագույն խորհրդին: 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեի դրվեց Սահմանադրությունում փոփոխությունների ենթարկված նախագիծը: Թե՛ մինչև փոփոխությունները և թե՛ փոփոխություններից հետո նախագահը համարվում է պետության գլուխը, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը, հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է [8]:

Թեև Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունները հստակ են, այնուամենայնիվ, երկրի նախագահի իրականացրած քաղաքականությամբ է հիմնականում պայմանավորված երկրի ընդհանուր իրավիճակի և գործընթացների արդյունավետությունը: Եթե հանրապետության առաջին նախագահը՝ Լ.Տեր-Պետրոսյանը, ՀՀՇ առաջնորդը լինելով, իրականացնում էր այդ կուսակցության գաղափարախոսությունը, ապա երկրորդ նախագահը՝ Ռ.Քոչարյանը, ով համազգային շարժման ընթացքում ՀՀՇ համակիրներից էր, որևէ կուսակցության չի հարում և քանիցս հայտարարել է, որ իր կուսակցությունը ժողովուրդն է: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ նախագահներն իրենց գործունեության ընթացքում արժանացել ու արժանանում են որոշակի համակրանքի, ունեցել են և ունեն իրենց համախոհներն ու ընտրազանգվածը, այնուամենայնիվ, դեռևս տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավիճակների ներկայիս պայմաններում դեռևս լիովին չեն բավարարում բնակչության մի մասի ակնկալիքները:

Ըստ բարեփոխված Սահմանադրության, նախագահի լիազորությունների նվազման հաշվին աճել են Ազգային ժողովի և վարչապետի լիազորությունները: Միևնույն ժամանակ նախագահը ՀՀ-ում օժտված է շատ լայն լիազորություններով, որոնք հետազոտողները հետևյալ կերպ են տիպաբանում.

- պաշտպանական լիազորություններ
- միջազգային պայմանագրերի կնքում ու չեղյալ հայտարարում
- արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցիչների ընդունում
- օրենսդրական քաղաքականության ղեկավարում
- ՀՀ պաշտոնատար անձանց նշանակում և ազատում
- լիազորություններ օրենքների կատարման բնագավառում [9, էջ 117-136]:

Այս ամենով հանդերձ փաստենք, որ անկախ նախագահի կուսակցական և այլ պատկանելությունից, նա պաշտոնը ստանձնում է ընտրությունների միջոցով և թե՛ դիմության, թե՛ ընդդիմության երաշխավորն է ու միաժամանակ պարտավոր է պաշտպանել բոլորի շահերը՝ անկախ քաղաքացիների կողմնորոշումներից ու քաղաքական հայացքներից:

Ընտրովի է նաև ՀՀ Ազգային ժողովը: Օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի ընտրության ժողովրդավարական լինելը ընտրությունների ժամանակ ենթադրում է թույլատրելիության սահմաններում քաղաքական պայքար իշխող կառավարության և ընդդիմության (կուսակցությունների) միջև: Ավելին, ժողովրդավարական ընտրությունը ենթադրում է նաև միևնույն ընտրատարածքում մեկից ավելի թեկնածուների առկայություն: Բայց մեզանում պառլամենտարիզմի ինստիտուտները «հայտնված են հասարակական պահանջարկի տիրույթից դուրս» [10, էջ 93]: Դա իր պատմական պատճառներն ունի:

Հետխորհրդային Հայաստանում առաջին ազատ ընտրության բուն ընթացքը տեղի էր ունենում բացախոսության պայմաններում, որը, սակայն, չի կարելի լավագույն տարբերակը համարել, քանի որ պայքարը գնում էր իշխանության և ընդդիմության միջև այն դեպքում, երբ վերջինս ներկայացնում էր մեկ կուսակցություն, այսինքն՝ բացակայում էր պայքարը նաև կուսակցությունների միջև:

Ուրեմն, որքան էլ քաղաքական պայքարն ազատ լինի, լիակատար ժողովրդավարություն լինել չի կարող, քանի դեռ բացակայում է տեսականին, այն է՝ բազմակուսակցությունը: Միայն ընտրություններից հետո, երբ խորհրդարանն օրենք ընդունեց բազմակուսակցության և հասարակական կազմակերպությունների մասին, սկսեցին ձևավորվել տարբեր կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները:

Անկախ պետականության հաստատման պայմաններում ընտրություններով ձևավորված տարբեր գումարումների խորհրդարաններն ունեցել են որոշակի փոփոխություններ թե՛ ներկայացված պատգամավորների թվաքանակի ու քաղաքական ուժերի հարաբերակցության և թե՛ ընտրական համակարգի ու մեխանիզմների առումով: Եթե առաջին խորհրդարանում ներկայացված էին 260 պատգամավորներ, որոնցից 10-ը՝ Արցախից, ապա այսօր խորհրդարանում ներկայացված պատգամավորների թիվը 131 է: Եթե առաջին խորհրդարանը ձևավորվեց բացառապես մեծամասնական համակարգով, ապա այսօր խորհրդարանում ներկայացված պատգամավորներից 75-ը ընտրվել է համամասնական համակարգով: Փոփոխություն է կրել նաև խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի հարաբերակցությունը: Եթե առաջին խորհրդարանում մեծամասնություն էր կազմում մեկ քաղաքական ուժ, ապա այսօր ոչ մի քաղաքական ուժ չունի որա-

կյալ մեծամասնություն:

Այս փոփոխությունների առկայությամբ հանդերձ՝ բոլոր ժամանակներում ձևավորվել են նախընտրական դաշինքներ, և առանց բացառության՝ ոչ մի դաշինք, մինչև խորհրդարանի լիազորությունների ավարտը, ամբողջությամբ չի պահպանվել: Առաջին խորհրդարանում մեծամասնություն կազմող ժողովրդավարական, ազատական գաղափարներով մեծամասնություն էր կազմում ՀՀՇ-ն, որը և հիմք դրեց նախընտրական դաշինքների ձևավորմանը: 1995թ. ընտրություններից առաջ ձևավորված «Հանրապետություն» բլոկը 1998թ. ոչ միայն «ճեղք տվեց» Արցախի հարցով պայմանավորված քաղաքական գործընթացների հետ կապված, այլ նաև բերեց քաղաքական ուժերի վերաբաշխման: Առաջին նախագահի հրաժարականից հետո խորհրդարանում ձևավորվեց «Երկրապահ» խմբակցությունը, որը «կլանեց» ոչ միայն «Հանրապետություն» բլոկի մեջ մտնող քաղաքական ուժերը, այլ նաև ՀՀՇ ցուցակով պատգամավորի մանդատ ունեցող մեծամասնությանը: Անկախությունից ի վեր առաջին անգամ ՀՀՇ-ն օրենսդիր իշխանությունում ներկայացված մնաց ոչ միայն շատ քիչ թվով անդամներով, այլ նաև կորցրեց իշխանության գործադիր լծակները:

Սակայն փլուզման վտանգից ապահովված չմնացին նաև հաջորդ խորհրդարանական ընտրություններից առաջ դաշինք կազմած այլ քաղաքական ուժեր ևս: 1999թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ողբերգությունից հետո, երբ զոհվեցին «Միասնություն» դաշինքում միավորված երկու հզոր կուսակցությունների առաջնորդները՝ Կ.Դեմիրճյանը և Վ.Սարգսյանը, փլուզվեց նաև վերջիններիս կողմից ձևավորված դաշինքը: Իսկ 2003թ. խորհրդարանական ընտրություններից հետո առաջին անգամ նորանկախ Հայաստանի օրենսդիր իշխանությունում ոչ մի քաղաքական ուժ մեծամասնություն չկազմեց: Դրանով էր պայմանավորված կոալիցիայի ձևավորումը երեք քաղաքական ուժերի՝ ՀՀԿ-ի, ՕԵԿ-ի, ՀՅԴ-ի կողմից, որոնք էլ հանրապետության նախագահի հետ միասին ձևավորեցին իշխանությունը: Սակայն այս անգամ էլ խորհրդարանում ձևավորված մեծամասնությունը զերծ չմնաց տրոհումից. կոալիցիայից դուրս եկավ ՕԵԿ-ը: Խմորումներ տեղի ունեցան նաև ընդդիմադիր «Արդարություն» դաշինքում ընդգրկված քաղաքական ուժերի միջև: Դաշինքի մաս կազմող քաղաքական կուսակցություններից շատերը ներկայացված են միայն կուսակցության առաջին դեմքով, որոնք շատ դեպքերում տուրք են տալիս անձնական ամբիցիաներին և սեփական իմիջի ձևավորմանը: Այդ «հիվանդությունից» զերծ չեն նաև թե՛ մյուս կուսակցությունները, թե՛ այդ կուսակցությունները ներկայացնող պատգամավորները՝ համապատասխանաբար ձևավորելով թե՛ կուսակցության, թե՛ իրենց սեփական իմիջը:

Խորհրդարանական ուժերի այս համեմատությունը, ցավոք, չարյաց

փոքրագույնն է, եթե փորձենք վերլուծել պատգամավորների գործունեությունն այս ամբողջ ժամանակահատվածում: Յուրաքանչյուր խորհրդարանում ընդգրկված պատգամավորների՝ ինչ-որ օրենսդրական գործունեությամբ զբաղվելու կարողությունը զիջում է նախորդին: Գնալով մեծանում է խորհրդարանում ներկայացված գործարար պատգամավորների տեսակարար կշիռը:

Ժողովրդավարական ինստիտուտների մյուս թևը՝ գործադիր իշխանությունը, կառավարությունն է՝ վարչապետի գլխավորությամբ: Անկախ պետականության հռչակումից ի վեր կառավարությունում նույնպես տեղի են ունեցել փոփոխություններ թե՛ կառուցվածքային և թե՛ նախարարներին նշանակելու առումով: Էականորեն կրճատվել է նախարարությունների թիվը: Փոխվել են նաև որոշակի գործառույթներ: Որոշ նախարարություններ միացվել են, որոշներն էլ, նոր պայմաններին համահունչ, վերակազմավորվել: Նախարարների բացարձակ մեծամասնությունը, խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությամբ պայմանավորված, ներկայացնում էր ՀՀՇ-ն: Սակայն աստիճանաբար կուսակցական պատկանելությունը մեկ ուժից տեղափոխվեց մի քանի կուսակցությունների դաշտ:

Նախարարների նշանակումն ըստ կուսակցական պատկանելության պայմանավորված էր ոչ միայն խորհրդարանում առկա ուժերի հարաբերակցությամբ, այլ նաև նախագահի կուսակցական պատկանելությամբ: Եթե առաջին նախագահը ՀՀՇ գաղափարախոսն էր և խորհրդարանում մեծամասնություն էր կազմում հենց ՀՀՇ-ն, որով էլ պայմանավորված էր կառավարությունում նրանց բացարձակ մեծամասնությունը, ապա երկրորդ նախագահը որևէ կուսակցության չի հարում, իսկ խորհրդարանում էլ որևէ քաղաքական ուժ որակյալ մեծամասնություն չի կազմում, և հասկանալի է դառնում որոշ նախարարների վերկուսակցական լինելը:

Արդի պայմաններում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորված և միմյանց հակակշիռ լինելու մասին ձևի առումով, թերևս, կարող ենք խոսել՝ մատնացույց անելով Սահմանադրությունը, սակայն բովանդակային առումով հարցին կարելի է մոտենալ որոշակի վերապահումով:

***Հոկտեմբեր, 2006թ.***

## Աղբյուրներ և գրականություն

1. *Тощенко Ж.Т.,* Парадоксальный человек, М., 2001.
2. *Лоуэлль А.Л.,* Государственный строй Англии, т. 1., М., 1915.
3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով (երրորդ գումարում), Երևան, 2004:

4. *Քեռյան Գ.,* Քաղաքական կուսակցություններ, Երևան, 1996:
5. *Պողոսյան Գ.,* Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան, 2006:
6. *Дюверже М.,* Политические партии, М., 2000.
7. *Պողոսյան Գ., Մխիթարյան Ս.,* Հայաստանի քաղաքական կուսակցություններ (Տեղեկատվություն և վերլուծություն 1991-1996թթ.), Երևան, 1997:
8. ՀՀ Սահմանադրություն:
9. *Փիլիպոսյան Վ.,* Ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 1994:
10. *Հովսեփյան Ս.,* Հայաստանը սոցիալ-փիլիսոփայական ակնարկներում, Երևան, 2003:

# ФОРМИРОВАНИЕ ПОЛИТИЧЕСКИХ ИНСТИТУТОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

***Самсон Мхитарян***

Резюме

Становление политических институтов, формировавшихся на всем протяжении человеческой истории, претерпело множество изменений. Участие избирателей в государственном управлении изменило взаимоотношения между исполнительными и законодательными властями, устанавливая их взаимоконтроль по отношению друг к другу.

Формирование нового политического сознания привело к возможности конституционным путем решить возникшие проблемы нации при помощи политических институтов. Тем не менее, наряду с формированием политических институтов, все еще существующая в нынешних экономических, социальных и политических условиях безрезультативная межпартийная конкуренция привела к определенной потере доверия к властям и все еще не удовлетворяют ожидания части населения.

В этих условиях, говоря о сформировавшихся политических институтах и об их противовлиянии, принимая во внимание наличие этих институтов и разделение их полномочий согласно Конституции, мы констатируем, что в плане их окончательного становления и восприятия со стороны общества все еще есть необходимость в серьезных реформах.